ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ

№_____ «___»_____ 2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 1/06

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԲՈԼՈՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 17.03.2020թ.

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի ա) կետով, նույն հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 730-Լ որոշման հավելվածի 20-րդ կետի 13-րդ ենթակետը և ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 16-ի՝ «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» N 298-Ն որոշումը՝

ՊԱՐԶԵՑԻ

Առողջապահության համաշխարհային կազմակերպության գլխավոր տնօրենի՝ 2020 թվականի մարտի 13-ի հայտարարությամբ՝ կորոնավիրուսային հիվանդությունը (COVID-19) որակվել է որպես պանդեմիա, նկատի ունենալով աշխարհում և Հայաստանի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման դեպքերը կանխելու անհրաժեշտությունը, ինչպես նաև՝ հաշվի առնելով վարակի տարածման սահմանների և դրանով վարակված անձանց թվի ավելացման պայմաններում համապատասխան կանխարգելիչ աշխատանքների և միջոցառումների իրականացումը և դրանց արդյունքում անձանց կյանքի և առողջության պաշտպանությունը՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Կասեցնել ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հարուցված և չավարտված բոլոր վարչական վարույթները:

2. Սույն որոշմամբ կասեցված վարչական վարույթները վերսկսել կասեցման հիմք դարձած հանգամանքները վերանալուց հետո:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

X

ԳԵՂԱՄ ՇԱԽԲԱՂՅԱՆ